

ԿԱՊԻՏԱԼԻՉՄԻ ՈՒԺԸ

Լարրի Ֆինկի 2022թ.-ի նամակը՝ ուղղված տնօրեններին

Ամեն տարվա առաջնահերթությունս է ձեզ գրել BlackRock-ի հաճախորդների անունից, որոնք ձեր ընկերության բաժնետերերն են: Մեր հաճախորդները մեծամասամբ ներդրումներ են կատարում իրենց կենսաթոշակը ֆինանսավորելու համար: Նրանց ներդրումների ժամանակային հորիզոնը կարող է ընդգրկել տասնամյակներ:

Ֆինանսական անվտանգությունը, որին մենք ձգտում ենք ապահովել մեր հաճախորդների համար, չի ստեղծվում միանգամից: Դա երկարաժամկետ աշխատանք է, և մենք երկարաժամկետ մոտեցման համակիրներ ենք: Ահա թե ինչու վերջին տասնամյակի ընթացքում ես գրել եմ ձեզ՝ որպես այն ընկերությունների գլխավոր տնօրենների և նախագահների, որոնցում մեր հաճախորդները ներդրումներ են կատարում: **Այս նամակները ես գրում եմ իրենց ակտիվների կառավարումը մեզ վստահած հաճախորդների անունից՝ ընդգծելու այն թեմաները, որոնք, իմ կարծիքով, կենսական նշանակություն ունեն երկարաժամկետ կայուն եկամուտներ ապահովելու և դրված նպատակներին հասնելու համար:**

Երբ 34 տարի առաջ ես և իմ գործընկերները որպես ստարտափ հիմնեցինք BlackRock-ը, ես չունեի ընկերություն ղեկավարելու փորձառություն: Վերջին երեք տասնամյակների ընթացքում ես հնարավորություն եմ ունեցել զրուցելու բազմաթիվ գլխավոր տնօրենների հետ և ըմբռնելու, թե որոնք են իրապես մեծ ընկերությունների բնութագրիչները: Կրկին և կրկին, նրանք բոլորն ունեն հստակ պատկերացում իրենց նպատակի մասին, հետևողական են արժեքների հարցում և, ամենակարևորը, նրանք գիտակցում են իրենց առանցքային շահակիցներին ներգրավելու և դրանց ծառայելու կարևորությունը: Սա շահակիցների կապիտալիզմի հիմքն է:

Շահակիցների կապիտալիզմը քաղաքականություն չէ: Դա սոցիալական կամ գաղափարական օրակարգ չէ: Դա «հայտնություն» չէ: Դա *կապիտալիզմ է*, որն առաջնորդվում է ձեր և ձեր աշխատակիցների, հաճախորդների, մատակարարների և համայնքների միջև փոխշահավետ հարաբերություններով, որոնք ձեր ընկերության բարգավաճման հենքն են: Սա է կապիտալիզմի ուժը:

Այսօրվա փոխկապակցված գլոբալ աշխարհում ընկերությունն իր բաժնետերերի համար երկարաժամկետ արժեք ապահովելու նպատակով պետք է ձևավորի արժեք և գնահատվի իր շահակիցների ողջ շրջանակի կողմից: Հենց շահակիցների արդյունավետ կապիտալիզմի շնորհիվ է, որ կապիտալը բաշխվում է արդյունավետորեն, ընկերությունները հասնում են կայուն շահութաբերության, և արժեքը ստեղծվում ու պահպանվում է երկարաժամկետ հատվածում: Մի մոլորվեք. շահույթի արդար ձգտումը դեռևս

աշխուժացնում է շուկաները, իսկ երկարաժամկետ շահութաբերությունն այն միջոցն է, որով շուկաներն ի վերջո որոշում են ձեր ընկերության հաջողությունը:

Կապիտալիզմի հիմքում վերաիմաստավորման մշտական գործընթացն է. փոփոխվող շրջակա աշխարհում կամ նոր մրցակիցների ի հայտ գալու վտանգի պայմաններում ինչպես պետք է ընկերությունները շարունակաբար զարգանան: **Համաճարակը փաստացիորեն արագացրեց յուրաքանչյուր ընկերության գործառնական միջավայրի էվոլյուցիան:** Այն փոխում է մարդկանց աշխատելաճճը և սպառողների նախասիրությունները: Այն ստեղծում է նոր բիզնեսներ և ոչնչացնում մյուսները: Հատկանշական է, որ այն կտրուկ արագացնում է կյանքը և բիզնեսը վերափոխող տեխնոլոգիաները: Այս միջավայրին հարմարվելու ցանկություն ունեցող նորանոր ընկերություններին իրենց տեսլականն իրականացնելու համար անհրաժեշտ կապիտալն ավելի հասանելի է, քան երբևէ: Վերաիմաստավորվում են ընկերության, նրա աշխատակիցների և հասարակության միջև հարաբերությունները:

COVID-19-ը խորացրեց նաև ավանդական ինստիտուտների նկատմամբ վստահության անկումը և սրեց բևեռացումն արևմտյան մի շարք հասարակություններում: Այս բևեռացումը բազմաթիվ նոր մարտահրավերներ է առաջադրում գլխավոր տնօրեններին: Քաղաքական ակտիվիստները կամ լրատվամիջոցները կարող են քաղաքականացնել ձեր ընկերության գործունեությունը: Նրանք կարող են ձեր ապրանքանիշն օգտագործել սեփական օրակարգն առաջ մղելու հարցում: Նման միջավայրում փաստերը հաճախ են վիճարկում, բայց բիզնեսը հնարավորություն ունի առաջնորդելու: Աշխատակիցները գնալով ավելի շատ են իրենց գործատուին վերաբերվում որպես տեղեկատվության ամենավստահելի, իրավասու և էթիկական աղբյուրի, քան կառավարությանը, լրատվամիջոցներին և ՀԿ-ներին:

Ահա թե ինչու է ձեր ձայնն ավելի կարևոր, քան երբևէ: **Գլխավոր տնօրենների համար երբեք ավելի կարևոր չի եղել ունենալ հետևողական ձայն, հստակ նպատակ, համահունչ ռազմավարություն և երկարաժամկետ տեսլական:** Այս բուռն միջավայրում ձեր ընկերության նպատակը հյուսիսային աստղն է: Շահակիցները, որոնցից կախված է ձեր բաժնետերերի համար շահույթի ապահովումը, կարիք ունեն լինել տեղեկացված անմիջականորեն ձեզանից, ինչպես նաև լինել ներգրավված և ոգեշնչված: Նրանք չեն ցանկանում լսել գլխավոր տնօրենների կարծիքն ընթացիկ հարցերի վերաբերյալ, սակայն նրանք պետք է տեղեկացված լինեն ընկերությունների երկարաժամկետ հաջողության համար էական նշանակություն ունեցող հասարակական խնդիրների վերաբերյալ նրանց դիրքորոշմանը:

Ձեր ընկերության նպատակը շահակիցների հետ հարաբերությունների հիմքում դնելն ունի որոշիչ նշանակություն երկարաժամկետ հաջողության համար: Աշխատակիցները պետք է հասկանան և կիսեն ձեր նպատակը: Երբ դա հաջողվում է, նրանք կարող են դառնալ ձեր ամենահավատարիմ պաշտպանները: Հաճախորդները ցանկանում են տեսնել և լսել ձեր դիրքորոշումը, քանի որ նրանք ավելի ու ավելի են ձգտում գործ ունենալ իրենց արժեքները կիսող ընկերությունների հետ: Բաժնետերերը պետք է հասկանան ձեր տեսլականն ու առաքելությունն առաջնորդող սկզբունքները: Մեծ է հավանականությունը, որ նրանք

կաջակցեն ձեզ դժվարին պահերին, եթե հստակ պատկերացնեն ձեր ռազմավարությունը և, թե ինչ է թաքնված դրա հետևում:

Աշխատանքի համար նոր աշխարհ

Համաճարակը ոչ մի հարաբերություն այնքան չի փոխել, որքան գործատուների և աշխատողների միջև առկա հարաբերությունները: ԱՄՆ-ում և Մեծ Բրիտանիայում աշխատանքից ազատվելու մակարդակը գտնվում է պատմական առավելագույնի վրա: Իսկ ԱՄՆ-ում վերջին տասնամյակների ընթացքում դիտարկում ենք աշխատավարձի աճի ամենաբարձր տեմպերը: Շատ լավ է, երբ աշխատողներն օգտվում են նոր հնարավորություններից: Դա աճող տնտեսության նկատմամբ նրանց վստահության վկայությունն է:

Թեև կադրերի հոսունությունը և աշխատավարձերի բարձրացումը բնութագրական չեն յուրաքանչյուր տարածաշրջանի կամ ոլորտի համար, աշխատողներն ամբողջ աշխարհում իրենց գործատուներից սպասում են ավելին՝ ներառյալ ավելի շատ ճկունություն և ավելի բովանդակալից աշխատանք: Մինչ ընկերությունները վերակառուցվում են համաճարակից հետո, գլխավոր տնօրենները բախվում են սովորականից բացարձակապես տարբերվող այլ հարացույցի: Ընկերություններն ակնկալում էին, որ աշխատողները կհաճախեն գրասենյակ շաբաթական հինգ օր: Հոգեկան առողջության հարցերն աշխատավայրում հազվադեպ էին քննարկվում: Իսկ ցածր և միջին եկամուտ ունեցողների աշխատավարձերը փաստացիորեն չէին աճում:

Այդ աշխարհը հեռացել է:

Իրենց գործատուներից ավելին պահանջող աշխատողներն արդյունավետ կապիտալիզմի անքակտելի բնութագրիչն են: Դա նպաստում է բարգավաճմանը և ձևավորում ավելի մրցակցային միջավայր տաղանդների համար՝ մղելով ընկերություններին իրենց աշխատակիցների համար ստեղծել կատարյալ ու ավելի նորարարական միջավայր, դրդելու բաժնետերերի համար ավելի բարձր եկամուտներ ապահովող գործողությունների: Նման ընկերություններն ձեռք են բերում առավելություններ: Մեր հետազոտությունները վկայում են, որ իրենց աշխատակիցների հետ ամուր կապեր հաստատած ընկերությունները համաճարակի ընթացքում ունեցան կադրերի ավելի նվազ հոսունություն և ավելի բարձր եկամուտներ [1]:

Նոր իրականությանը չհարմարվող և իրենց աշխատակիցներին չարձագանքող ընկերությունները վտանգում են իրենց: Հոսունությունը բարձրացնում է ծախսերը, նվազեցնում արտադրողականությունը և քայքայում մշակույթն ու կորպորատիվ հիշողությունը: Գլխավոր տնօրենները պետք է իրենց հարցնեն՝ արդյոք ստեղծում են այնպիսի միջավայր, որն օգնում է մրցել տաղանդների համար: BlackRock-ում մենք անում ենք դա. աշխատանքային այս նոր աշխարհում կողնորոշվելու համար մենք աշխատում ենք մեր աշխատակիցների հետ:

Նման միջավայրի ձևավորումն ավելի բարդ է, քան երբևէ, և դուրս է գալիս վարձատրության և ճկունության խնդիրների շրջանակից: Համավարակը ոչ միայն փոխեց մեր հարաբերություններն այնտեղ, որտեղ մենք աշխատում ենք ֆիզիկապես, այլև լույս սփռեց այնպիսի խնդիրների վրա, ինչպիսիք են ռասայական հավասարությունը, երեխաների խնամքը և հոգեկան առողջությունը, և բացահայտեց աշխատանքում սերունդների սպասումների միջև առկա ճեղքվածքը: Այս թեմաներն այժմ գտնվում են գլխավոր տնօրենների ուշադրության կենտրոնում: Նրանք պետք է մտածեն, թե ինչպես օգտագործել իրենց ձայնը և լուծել իրենց աշխատակիցների համար կարևոր սոցիալական խնդիրները: Ողջախոհություն ցուցաբերող և իրենց նպատակներին հավատարիմ ընկերություններն ավելի մեծ հավանականությամբ կձևավորեն ամուր կապեր:

BlackRock-ում մենք ցանկանում ենք հասկանալ, թե ինչպես է այս միտումն ազդում ձեր ոլորտի և ընկերության վրա: Ի՞նչ եք անում ձեր աշխատակիցների հետ կապը խորացնելու համար: Ինչպե՞ս եք ապահովում, որ տարբեր ծագում ունեցող աշխատակիցներն իրենց բավականաչափ ապահով զգան՝ իրենց ստեղծագործական, նորարարական ներուժը և արտադրողականությունն առավելագույնի հասցնելու համար: Ինչպե՞ս եք ապահովում, որ ձեր խորհուրդը պատշաճ վերահսկի այս կարևորագույն խնդիրները: Մեր աշխատանքն արդեն երբեք նույնը չի լինի: Ինչպե՞ս է ձեր ընկերության մշակույթը հարմարվում այս նոր աշխարհին:

Կապիտալի նոր աղբյուրները խթանում են շուկայի խաթարումը

Վերջին չորս տասնամյակների ընթացքում մենք ականատես ենք եղել կապիտալի հասանելիության պայթյունի մի շարք դեպքերի: Այսօր համաշխարհային ֆինանսական ակտիվները կազմում են 400 տրիլիոն դոլար [2]: Այս էքսպոնենցիալ աճը ներդրողների և ընկերությունների համար բերում է ռիսկեր և հնարավորություններ, և դա նշանակում է, որ բանկերն այլևս ֆինանսավորման միակ դռնապահները չեն:

Երիտասարդ նորարարական ընկերությունները երբեք ավելի հեշտ հասանելիություն չեն ունեցել կապիտալի նկատմամբ: Երբեք նոր գաղափարներն իրականություն դարձնելու համար այսքան գումար չի եղել: Սա խթանում է նորարարական դինամիկ միջավայրը: Ինչը նշանակում է, որ գործնականում յուրաքանչյուր հատվածում առկա են բեկումնային բազմաթիվ ստարտափներ, որոնք փորձում են տապալել շուկայի առաջատարներին: Եթե հեղինակավոր ընկերությունները ցանկանում են պահպանել իրենց մրցունակությունն ավելի փոքր և ճարպիկ բիզնեսների նկատմամբ, դրանց գլխավոր տնօրենները պետք է ըմբռնեն այս փոփոխվող միջավայրը և հասանելի կապիտալի բազմազանությունը:

BlackRock-ը ցանկանում է տեսնել, որ ընկերությունները, որոնցում մենք ներդրումներ ենք կատարում մեր հաճախորդների համար, զարգանում և աճում են, որպեսզի գալիք տասնամյակների հեռանկարով բերեն գրավիչ եկամուտներ: Որպես երկարաժամկետ ներդրողներ՝ մենք ձգտում ենք աշխատել բոլոր ոլորտների ընկերությունների հետ: Բայց

մենք ևս պետք է լինենք ճկուն և ապահովենք մեր հաճախորդների ակտիվների ներդրումն իրենց նպատակներին համահունչ գործող և երկարաժամկետ հատվածում հաջողության լավագույն հնարավորություններ ունեցող դինամիկ ընկերություններում՝ լինեն դրանք ստարտափներ, թե կայացած խաղացողներ: Դա մեր գործն է և՛ որպես կապիտալիստների, և՛ որպես կառավարիչների:

Ես հավատում եմ կապիտալիզմի ուժին օգնելու մարդկանց հասնել ավելի լավ ապագայի, խթանել նորարարությունը, կառուցել ճկուն տնտեսություններ և հաղթահարել մեր ամենաբարդ մարտահրավերները: **Կապիտալի շուկաները հնարավորություն են տվել ընկերություններին և երկրներին բարգավաճել: Սակայն կապիտալի հասանելիությունն իրավունք չէ: Դա արտոնություն է: Եվ այդ կապիտալը պատասխանատու և կայուն ձևով ներգրավելու պարտականությունը դրված է ձեր վրա:**

Կապիտալիզմ և կայունություն

Շահակիցների մեծ մասը՝ սկսած բաժնետերերից մինչև աշխատակիցները, հաճախորդները, համայնքները և կարգավորող մարմինները, ներկայումս ակնկալում է, որ ընկերությունները դերակատարում կունենան համաշխարհային տնտեսության դեկարբոնացման (դեկարբոնիզացիա) գործընթացում: Գլոբալ էներգետիկ անցումն արդյունավետ առաջնորդելու ձեր կարողությունից բացի, ավելի շատ բան չի կարող ազդել կապիտալի տեղաբաշխման որոշումների, և հետևաբար, ձեր ընկերության երկարաժամկետ արժեքի վրա:

Երկու տարի է, ինչ գրել եմ, որ կլիմայի ռիսկը ներդրումային ռիսկ է: Եվ այդ կարճ ժամանակահատվածում մենք ականատես ենք կապիտալի տեկտոնական տեղաշարժերի [3]: Կայուն ներդրումների ծավալը ներկայումս հասել է 4 տրիլիոն դոլարի [4]: Դեկարբոնացման գործողություններն ու ջանքերը նույնպես աճել են: Սա դեռ սկիզբն է տեկտոնական տեղաշարժերը կայուն ներդրումների ուղղությամբ դեռ արագանում են: Անկախ այն բանից, թե կապիտալը տեղակայվում է էներգետիկ նորարարության վրա կենտրոնացած նոր ձեռնարկություններում, թե այն ավանդական ինդեքսներից փոխանցվում է դեպի ավելի մասնագիտացված պորտֆելներ և ապրանքներ, շրջանառության մեջ կտեսնենք ավելի շատ փող:

Ածխածնից չեզոք (net zero) աշխարհին անցման ընթացքում կվերափոխվի յուրաքանչյուր ընկերություն և յուրաքանչյուր ոլորտ: Հարց է՝ մենք կառաջնորդե՞նք, թե՞ մեզ կառաջնորդեն:

Մի քանի տարվա ընթացքում մենք բոլորս վկա դարձանք նորարարների կողմից ավտոարդյունաբերության վերափոխման ավորմանը: Եվ այսօր յուրաքանչյուր ավտոարտադրող ձգտում է դեպի էլեկտրական ապագա: Ավտոարդյունաբերությունը պարզապես գտնվում է առաջին պլանում: Նոր կայուն տեխնոլոգիաների շնորհիվ կվերափոխվի յուրաքանչյուր ոլորտ:

Ինժեներները և գիտնականները շուրջօրյա ռեժիմով աշխատում են ցեմենտի, պողպատի և պլաստմասսայի, նավային, օդային և ավտո բեռնափոխադրումների, գյուղատնտեսության, էներգետիկայի և շինարարության դեկարբոնացման վրա: Ես հավատում եմ, որ համաշխարհային տնտեսության դեկարբոնացումը կստեղծի մեր կյանքի մեծագույն ներդրումային հնարավորությունը: Այն, անկախ գործունեության ոլորտից, հետևում կթողնի նաև չվերափոխվող ընկերություններին: Իրենց ապագան չալանավորող քաղաքներն ու երկրները, այդ ընկերությունների հետ մեկտեղ, հայտնվել են հետևում մնալու եզրին: Նրանք վտանգում են կորցնել աշխատատեղերը նույնիսկ այն դեպքում, երբ այլ վայրեր ձեռք են բերում դրանք ավելացնելու հնարավորություն: Տնտեսության դեկարբոնացումը կուղեկցվի բազմաթիվ աշխատատեղերի ստեղծմամբ նրանց համար, ովքեր զբաղվում են երկարաժամկետ պլանավորմամբ:

Հաջորդ 1000 միաեղջյուր ստարտափները չեն լինի որոնողական համակարգերը կամ սոցիալական ցանցերը: Դրանք կլինեն կայուն, մասշտաբային նորարարներ՝ ստարտափներ, որոնք օգնում են աշխարհի դեկարբոնացմանը և էներգետիկ անցումը մատչելի են դարձնում բոլոր սպառողների համար: Մենք պետք է ազնիվ լինենք այն հարցում, որ էկոլոգիապես կանաչ արտադրանքն այսօր հաճախ ավելի թանկ է: Այս կանաչ պարզևի նվազեցումը էական նշանակություն կունենա կանոնակարգված և արդար անցման համար: Նոր գաղափարներ որոնող կապիտալի աննախադեպ ծավալների պայմաններում գործող անձինք պետք է հստակ պատկերացնեն դեպի net zero տնտեսություն տանող իրենց հաջողության ուղին: Եվ միայն ստարտափները չեն, որ կարող են վերափոխել ճյուղերը: Համարձակ գործող անձինք նույնպես կարող են և պարտավոր են դա անել: Իրոք, գործող շատ անձինք համաշխարհային մասշտաբով առաջիկա բեկումնային փոփոխությունների պայմաններում կապիտալի, շուկայական գիտելիքների և տեխնիկական փորձաքննության առումներով ունեն առավելություններ:

Մեր հարցն այս ընկերություններին հետևյալն է՝ ի՞նչ եք անում ձեր բիզնեսը խաթարելու համար: Ինչպե՞ս եք պատրաստվում և մասնակցում net zero անցմանը: Քանի որ ձեր ոլորտը փոխակերպվում է էներգետիկ անցման արդյունքում, դուք կգնա՞ք ոչ խելամիտ ճանապարհով, թե՞ կլինեք փյունիկ:

Մենք կենտրոնանում ենք կայունության վրա ոչ թե այն պատճառով, որ բնապահպաններ ենք, այլ որովհետև մենք կապիտալիստներ ենք և մեր հաճախորդների վստահված անձինք: Դա պահանջում է ըմբռնել, թե ինչպես են ընկերություններն իրենց բիզնեսը հարմարեցնում տնտեսական զանգվածային փոփոխություններին: Այս ուղղության շրջանակներում մենք ընկերություններին խնդրում ենք սահմանել ջերմոցային գազերի կրճատման կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ թիրախներ: Այս թիրախները և դրանց հասնելու ծրագրերի որակը կարևոր նշանակություն ունեն ձեր բաժնետերերի երկարաժամկետ տնտեսական շահերի համար: Հենց այս պատճառով էլ խնդրում ենք ձեզ հրապարակել հաշվետվություններ՝ Կլիմային առնչվող ֆինանսական տեղեկատվության բացահայտման (TCFD) կարգավորումներին

համապատասխան: Մենք կարծում ենք, որ դրանք կարևոր գործիքներ են գալիք փոփոխություններին հարմարվելու ձեր ընկերության կարողությունները հասկանալու համար:

Net zero-ին անցումն արդեն իսկ անհավասար է, երբ համաշխարհային տնտեսության տարբեր հատվածներ շարժվում են տարբեր արագություններով: Դա միանգամից չի կատարվում: Մենք պետք է շագանակագույն երանգի միջով անցում կատարենք դեպի կանաչը: Օրինակ՝ անցումային շրջանում մատչելի էներգիայի մատակարարումների անընդհատությունն ապահովելու նպատակով ավանդական հանածո վառելիքները, ինչպիսին բնական գազն է, կարևոր դեր կխաղան ինչպես որոշակի շրջաններում էներգիայի արտադրության և ջեռուցման, այնպես էլ ջրածնի արտադրության համար:

Փոփոխությունների տեմպերը շատ տարբեր կլինեն զարգացող և զարգացած երկրներում: Բայց բոլոր շուկաները կպահանջեն աննախադեպ ներդրումներ դեկարբոնացման տեխնոլոգիայի մեջ: Մեզ անհրաժեշտ են էլեկտրական լամպի մակարդակով վերափոխման միտված հայտնագործություններ, և դրանք մասշտաբային ու մատչելի դարձնելու համար պետք է խթանենք դրանցում ներդրումները:

Մինչ մենք հետապնդում ենք այս հավակնոտ և ժամանակատար նպատակները, կառավարությունները և ընկերությունները մարդկանց համար պետք է ապահովեն հուսալի և մատչելի էներգիայի աղբյուրների հասանելիությունը: Սա միակ ճանապարհն է, որով մենք կստեղծենք ազնիվ և արդար կանաչ տնտեսություն և կխուսափենք հանրային տարածայնություններից: Իսկ բացառապես առաջարկի սահմանափակման վրա կենտրոնացող և ածխաջրածինների պահանջարկը հաշվի չառնող ցանկացած ծրագիր կբարձրացնի էներգակիրների գները նրանց համար, ովքեր ամենաքիչը դա կարող են իրենց թույլ տալ: Սա կհանգեցնի կլիմայի փոփոխության շուրջ ավելի մեծ բևեռացման և առաջընթացի խաթարման:

Նպատակային ոլորտներից հրաժարումը կամ պարզապես ածխածնի տեսանյունից ինտենսիվ ակտիվները պետական շուկաներից մասնավոր շուկաներին փոխանցելը աշխարհին չի հասցնի net zero-ի: BlackRock-ը որպես քաղաքականություն նպատակ չի հետապնդում վաճառել նավթագազային ընկերությունների ակտիվները: Մեր որոշ հաճախորդներ նախընտրում են օտարել իրենց ակտիվները, մինչդեռ մյուսները մերժում են այդ մոտեցումը: Ածխածնային ինտենսիվ ոլորտների հեռատես ընկերությունները փոխակերպում են իրենց բիզնեսը, և նրանց գործողություններն դեկարբոնացման գործընթացի կարևոր մասն են: Մենք կարծում ենք, որ անցումային գործընթացն առաջնորդող ընկերությունները կենսական նշանակության ներդրումային հնարավորություն են տրամադրում մեր հաճախորդներին, և կապիտալի ներգրավումն այս փյունիկների կողմից զգալի նշանակություն կունենա net zero աշխարհի համար:

Կապիտալիզմն ունակ է վերափոխել հասարակությունը և հանդես գալ որպես փոփոխությունների հզոր կատալիզատոր: Բայց բիզնեսները չեն կարող դա անել

միայնակ, և նրանք չեն կարող հանդես գալ որպես կլիմայի ոստիկաններ: Դա չի կարող լավ արդյունք ապահովել հասարակության համար: Մեզ անհրաժեշտ է, որ կառավարությունները տարբեր շուկաներում ապահովեն կայունության քաղաքականության, կարգավորման և տեղեկատվության բացահայտման հստակ ուղիներ և հետևողական կարգաբանություն: Նրանք նաև պետք է աջակցեն անցումից տուժած համայնքներին, օգնեն համախմբել կապիտալը զարգացող շուկաների համար և ներդրումներ կատարեն համաշխարհային տնտեսության դեկարբոնացման համար էական նշանակություն ունեցող նորարարական լուծումների և տեխնոլոգիաների մեջ:

Հենց կառավարությունների և մասնավոր հատվածի համագործակցությունն էր, որ հանգեցրեց ռեկորդային ժամանակում COVID-19-ի դեմ պատվաստանյութերի մշակմանը: **Երբ օգտագործում ենք ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածի ուժը, մենք կարող ենք հասնել իրապես անհավանական արդյունքների: Սա այն է, ինչ պետք է անենք net zero-ի հասնելու համար:**

ESG քվեարկության ժամանակ հաճախորդին ընտրության հնարավորության տրամադրում

Շահակիցների կապիտալիզմը միտված է բաժնետերերի համար երկարաժամկետ ու հուսալի եկամուտների ապահովմանը: Դրա կարևոր տարրն է net zero աշխարհի վերաբերյալ ձեր ընկերության պլանների թափանցիկությունը: Սակայն դա ընդամենը մեկն է այն բազմաթիվ բացահայտումներից, որոնք մենք և մյուս ներդրողները հայցում ենք ընկերություններից: Որպես մեր հաճախորդների կապիտալի կառավարիչներ՝ մենք ընկերություններին խնդրում ենք բացահայտել, թե ինչպես են բաժնետերերի նկատմամբ պատրաստվում ստանձնել պատասխանատվություն՝ ներառյալ բնապահպանական, սոցիալական և կառավարման հուսալի մեթոդների և քաղաքականությունների միջոցով:

2018 թվականին ես գրել եմ, որ մենք կրկնապատկենք կառավարիչների մեր թիմը, և այն շարունակում է մնալ ամենամեծը մեր ոլորտում: Մենք ստեղծել ենք այս թիմը, որպեսզի կարողանանք հասկանալ ձեր ընկերության առաջընթացը ողջ տարվա, այլ ոչ միայն լիազորագրերի սեզոնի ընթացքում: Դուք պետք է նախանշեք ձեր սեփական ուղին և կիսվեք մեզ հետ ձեր առաջընթացով: Մենք ձգտում ենք հասկանալ ձեր առջև ծառայած խնդիրների ամբողջ շրջանակը, այլ ոչ միայն քվեաթերթիկում նշվածները: Դա ներառում է ձեր երկարաժամկետ ռազմավարությունը:

Ինչպես մյուս շահակիցները կարգավորում են իրենց հարաբերություններն ընկերությունների հետ, այնպես էլ շատ մարդիկ՝ որպես բաժնետեր, վերանայում են իրենց հարաբերություններն ընկերությունների հետ: Մենք աճող հետաքրքրություն ենք դիտարկում բաժնետերերի՝ ներառյալ մեր սեփական հաճախորդների շրջանում, հրապակային ընկերությունների կորպորատիվ կառավարման նկատմամբ:

Այդ իսկ պատճառով մենք նախաձեռնել ենք օգտագործել տեխնոլոգիաներ, որոնք հնարավորություն կընձեռնեն մեր ավելի մեծ թվով հաճախորդներին՝ քվեարկության միջոցով իրենց կարծիքն արտահայտել այն ընկերություններում, որոնցում ներդրվում են իրենց գումարները: **Մենք այժմ այս տարբերակն առաջարկում ենք որոշ ինստիտուցիոնալ հաճախորդների՝ ներառյալ 60 միլիոն մարդու աջակցող կենսաթոշակային հիմնադրամների:** Մենք աշխատում ենք աշխարհն ընդլայնելու ուղղությամբ:

Մենք հանձնառություն ենք ստանձնում մի ապագայի, որտեղ յուրաքանչյուր ներդրող, նույնիսկ անհատ ներդրողներ, ցանկության դեպքում կարող են հնարավորություն ունենալ մասնակցելու քվեարկությանը:

Մենք գիտենք, որ այսօր դրան հասնելու համար կան զգալի նորմատիվ և լոգիստիկ խոչընդոտներ, բայց մենք կարծում ենք, որ դա կարող է կապիտալիզմին բերել ավելի շատ ժողովրդավարություն և ավելի շատ ձայներ: Յուրաքանչյուր ներդրող արժանի է լինելու լսելի: Մենք կշարունակենք հետամուտ լինել նորարարություններին և աշխատել շուկայի այլ մասնակիցների և կարգավորող մարմինների հետ՝ օգնելու իրականություն դարձնել այս տեսլականը:

Իհարկե, շատ կորպորատիվ առաջնորդներ պատասխանատու են բաժնետիրական ակտիվները վերահսկելու համար՝ լինի դա աշխատակիցների կենսաթոշակային ֆոնդերի, կորպորատիվ գանձապետական հաշիվների կամ ձեր ընկերության կատարած այլ ներդրումների միջոցով: **Ես քաջալերում եմ ձեզ խնդրել ձեր ակտիվների կառավարչից քվեարկությանն անմիջականորեն մասնակցելու հնարավորություն:**

BlackRock-ի ներդրումների կառավարիչների թիմը վստահված անձի մեր մոտեցման առանցքն է, և մեր հաճախորդներից շատերը նախընտրում են շարունակել թիմին ներգրավել իրենց անունից քվեարկելու գործընթացում: Բայց ըստ էության, հաճախորդներն առնվազն պետք է ունենան քվեարկությանն ավելի անմիջականորեն մասնակցելու ընտրության հնարավորություն:

BlackRock-ի համոզմունքն է, որ ընկերություններն ավելի լավ են աշխատում, երբ նրանք գիտակցում են իրենց դերը հասարակության կյանքում և գործում են՝ ելնելով իրենց աշխատակիցների, հաճախորդների, համայնքների և բաժնետերերի շահերից:

Սակայն մենք նաև հավատում ենք, որ դեռ շատ բան կա սովորելու ընկերության երկարաժամկետ արժեքի վրա շահակիցների ունեցած ազդեցության մասին: **Ահա թե ինչու հետազոտության, երկխոսության և բանավեճի համար ֆորում ստեղծելու նպատակով մենք գործարկում ենք Շահակիցների կապիտալիզմի կենտրոնը:** Այն կօգնի մեզ հետազայում ուսումնասիրել ընկերությունների և նրանց շահակիցների հարաբերությունները, ինչպես նաև դրանց ազդեցությունը բաժնետիրական արժեքի վրա: Իրենց փորձը կիսելու և իրենց պատկերացումները ներկայացնելու նպատակով մենք

համախմբելու ենք առաջատար գլխավոր տնօրենների, ներդրողների, փորձագետների և գիտնականների:

Ընկերության բազմաթիվ շահակիցների մրցակցային շահերի բավարումը հեշտ չէ: Որպես գլխավոր տնօրեն՝ ես դա գիտեմ իմ փորձից: Այս բևեռացված աշխարհում գլխավոր տնօրենները միշտ կունենան շահակիցների մի խումբ, որոնք պահանջում են մեզանից մի բան, մինչդեռ շահակիցների մեկ այլ խումբ պահանջում է ճիշտ հակառակը:

Այդ իսկ պատճառով ավելի քան երբևէ կարևոր է, որ Ձեր ընկերությունը և նրա ղեկավարությունն առաջնորդվեն սեփական նպատակներով: Եթե Դուք հավատարիմ մնաք Ձեր ընկերության նպատակներին և կենտրոնանաք երկարաժամկետ հեռանկարի վրա, միաժամանակ հարմարվելով մեզ շրջապատող նոր աշխարհին, Դուք երկարաժամկետ եկամուտներ կբերեք Ձեր բաժնետերերին և կօգնեք գիտակցել կապիտալիզմի ուժը բոլորի համար:

Հղումներ

- [1] Kushel R., Van Nostrand E., Weinberg C., Paul V., Tran Q., Kazdin J., Schwaiger K., Basu D., Segafredo L., Dieterich C., *Seeking outperformance through sustainable insights*, BlackRock, October 2021, page 8.
- [2] [Crossing the horizon: North American asset management in the 2020s](#), McKinsey & Company, October 2021, page 34.
- [3] [Sustainability: The tectonic shift transforming investing](#), BlackRock, February 2020.
- [4] Morningstar, Simfund, Broadridge. Data includes Sustainable Mutual Fund, ETF, Institutional and Alternative AUM, as defined by third party data sources, excluding integration/engagement flags. MF and ETF data as of Oct '21, Institutional & Alternatives data as of Jun '21.